M A-S I S

N° 15

ՄԱ-ՍԻՍ

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, Avril – Août 2013

ԼԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, Հունվար – Հունիս 2013

10e FESTIVAL INTERNATIONAL DE FILMS D'EREVAN *L'ABRICOT D'OR*

L'abricot (*Prunus armeniaca*) est le « fruit national » de l'Arménie. C'est par l'Arménie que cette culture aurait été introduite dans le bassin méditerranéen. Et ce n'est pas par hasard que le festival international de films d'Erevan a reçu le nom du fruit le plus arménien et le plus délicieux.

Le Festival international de films *L'Abricot d'or* a été créé en 2004. Il s'ouvre chaque année au début du mois de juillet. Son ambition a été de devenir le plus important événement international cinématographique au Sud-Caucase. L'initiative du festival appartient au *Golden Apricot Fund for Cinema Development* et à l'*Armenian Association of Film Critics and Cinema Journalists*, avec le soutien des ministères arméniens des Affaires étrangères et de la Culture. Dès sa création, le festival a attiré l'intérêt et l'attention des spécialistes du cinéma mondial.

La devise du festival est : « Carrefour des civilisations et des cultures ». Ainsi, se croisent en son sein les films réalisés par des cinéastes d'origine ethnique, d'appartenance religieuse et de préférence esthétique différentes. Sous un angle particulier, ces films racontent les histoires de la vie quotidienne de gens simples, de leurs habitudes et coutumes, de leurs soucis et joies et de leurs espoirs et désespoirs. Les films tournés autour de différents groupes ethniques et de diversités confessionnelles sont toujours salués par les organisateurs et les jurys de sélection du festival.

Pour chaque catégorie il existe deux prix : l'Abricot d'or (récompense principale) et l'Abricot d'argent (prix spécial). Les

Photos : Garik Galstyan

La cérémonie de la bénédiction de l'abricot à l'église Sourb Zoravor d'Erevan

Ծիրանօրհնեքի արարողությունը Երևանի Սուրբ Զորավոր եկեղեցում

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ԵՐԵՎԱՆԻ 10-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԸ

Ծիրանը (*Prunus armeniaca*) Հայաստանի «ազգային միրգ»-ն է: Ասում են թե հենց Հայաստանի միջոցով է այս միրգը ներմուծվել միջերկրյածովյան ավազանի երկրներ: Եվ պատահական չէ, որ երևանյան միջազգային կինոփառատոնը ստացել է ամենահայկական ու ամենաքաղցրահամ այս մրգի անունը:

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը հիմնվել է 2004 թ. և ամեն տարի անցկացվում է հուլիս ամսվա սկզբին: Նրա գլխավոր նպատակն էր դառնալ Հարավային Կովկասի միջազգային ամենակարևոր կինեմատոգրաֆիական իրադարձությունը: Փառատոնի նախաձեռնությունը պատկանում է «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամին և Կինոգետների և կինոլրագրողների հայկական միությանը, որոնց աջակցում են Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի և Մշակույթի նախարարությունները: Ստեղծումից ի վեր փառատոնն իր վրա է սևեռել համաշխարհային կինոյի մասնագետների ուշադրությունը:

Կինոփառատոնի նշանաբանն է՝ «Քաղաքակրթությունների ու մշակույթների խաչմերուկ»: Երևանյան կինոստուգատեսն այսպիսով որակվում է որպես մշակույթների մի խաչմերուկ, որտեղ հանդիպում են տարբեր էթնիկական ծագման, կրոնական պատկանելության և գեղագիտական նախընտրությունների տեր ռեժիսորների ստեղծած ֆիլմեր: Այս կինոժապավենները մի ուրույն տեսանկյունից են պատկերում հասարակ մարդկանց առօրյա կյանքի պատմությունները, նրանց սովորություններն ու նիստուկացը, հոգսերն ու ուրախությունները, հավատն ու հուսահատությունը: Փառատոնի կազմակերպիչներն ու նախընտրական ժյուրիները մշտապես ողջունում են զանազան էթնիկ խմբերի և կրոնական բազմազանության մասին ֆիլմերի մասնակցությունը:

Յուրաքանչյուր մրցութային անվանակարգում գոյություն ունի երկու մրցանակ՝ «Ոսկե ծիրան» գլխավոր և «Արծաթե ծիրան» հատուկ մրցանակներ: Մրցույթին մասնակցող ֆիլմերը պետք է արտադրված լինեն փառատոնի մեկնարկից ոչ ուշ, քան երկու տարի առաջ:

Կինոփառատոնն ունի երեք մրցութային ծրագիր: Միջազգային մրցույթը բաղկացած է երեք անվանակարգերից՝ լիամետրաժ խաղարկային, վավերագրական և «Կորիզ» կարճամետրաժ խաղարկային ֆիլմեր: Ազգային «Հայկական համայնապատկեր» մրցույթը մրցանակներ է շնորհում ինչպես լիամետրաժ ու կարճամետրաժ, այնպես էլ վավերագրական և անիմացիոն ֆիլմերին՝ ստեղծված ծագումով հայ կինոբեմադրիչների

Photos : Garik Galstyan

La cérémonie de l'ouverture du festival 2013 sur la place Ch. Aznavour d'Erevan

Փառատոնի բացման արարողությունը Երևանի Ազնավուրի անվ. հրապարակում

films en compétition doivent être produits moins de deux ans avant la tenue du festival.

Photo : Garik Galstyan Atom Egoyan, Arsiné Khandjian et Serge Avedikian (derrière) sur le tapis rouge / Ատոմ Էգոյանը, Արսինե Խանջյանը և Սերժ Ավետիքյանը (հետևում) կարմիր գորգով անցնելիս

Il y a trois programmes de compétition au cours du festival. La compétition internationale comprend trois catégories : les films de fiction long métrage, les films documentaires, les films de fiction court métrage « Noyau ». La compétition nationale, dite « Panorama arménien », récompense des films de fiction long et de court métrage ainsi que des films documentaires et d'animation réalisés par des cinéastes d'origine arménienne. Des sections ont aussi été constituées. Considérant le cinéma comme moyen de dialogue culturel dans la région, le programme international « Films sans frontières » comporte des films de fiction long métrage et des films documentaires créés dans le Caucase et dans la région de la mer Noire. La section *Retrospective* met en avant des réalisateurs de différents pays en diffusant l'anthologie de leurs films. Parmi les cinéastes français, le festival a notamment proposé des rétrospectives de films de Léo Carax (2007), de Catherine Breillat (2008), de Claire Denis (2010) et de Bruno Dumont (2011). Cinq groupes de jury évaluent les films en compétition des différentes catégories et sections.

Les cérémonies d'ouverture et de clôture ainsi que la remise des prix ont lieu dans le cinéma le plus important d'Erevan : le *Moskva*. Les films sont diffusés dans différents salles, théâtres, galeries, autres centres culturels d'Erevan et dans un des parcs de la capitale (« Le Jardin des amoureux ») en plein air. C'est aussi l'occasion de mettre en valeur d'autres sites culturels. Mais le principal lieu de rencontre reste le cinéma le *Moskva* avec ses multiples salles et son café.

Depuis le début du lancement du festival son directeur fondateur est le cinéaste Harutyun Khatchatryan. Le spécialiste du cinéma Mikayel Stamboltsyan est le directeur des programmes et la critique de cinéma Susanna Harutyunyan est la directrice artistique.

Seulement 20 pays (70 cinéastes et 148 films) ont été présentés lors du premier festival *L'Abricot d'or* (du 30 juin au 4 juillet 2004). Le premier Abricot d'or du meilleur film de fiction a alors été décerné au cinéaste canadien d'origine arménienne Atom Egoyan pour son film *Ararat*. Depuis 2005, il est le président d'honneur du festival.

Pour le second festival de *L'Abricot d'or* (12-17 juillet 2005) déjà 45 pays ont fait une demande de participation. 144 films représentant 37 pays ont été sélectionnés par le jury. Les mondialement connus Kshishtoff Zanoussi et Nikita Mikhalkov ont été parmi les invités d'honneur. Cette année, L'Abricot d'or pour le meilleur long métrage de fiction a été décerné au russe Alexandre Sokourov pour son film *Le soleil*. Le festival a pris l'initiative de créer un réseau de cinéastes de la région baptisé

կողմից: Կան նաև տարբեր ենթաանվանակարգեր: Կինոն ընկալելով որպես տարածաշրջանային մշակութային երկխոսության միջոց՝ «Ֆիլմեր՝ առանց սահմանների» միջազգային մրցութային ծրագիրը ներառում է լիամետրաժ խաղարկային և վավերագրական ֆիլմեր՝ արտադրված Կովկասում և սևծովյան տարածաշրջանում: «Հետահայաց ցուցադրություններ»ի բաժինը ներկայացնում է տարբեր երկրների նշանավոր ռեժիսորներին՝ ցուցադրելով նրանց ֆիլմերի ընտրանին: Ֆրանսիացի կինոռեժիսորներից փառատոնը մասնավորապես ներկայացրել է Լեո Կարաքսի (2007), Կատրին Բրեյայի (2008), Կլեր Դենիի (2010) և Բրունո Դյումոնի (2011) ֆիլմերի հետահայաց ցուցադրությունները: Հինգ կազմավորված ժյուրիները գնահատում են մրցութային տարբեր անվանակարգերում ու ենթաբաժիններում ընդգրկված ֆիլմերը:

Photos : Garik Galstyan

Karen Kotcharyan, Nara Chleptchyan (à gauche) et Rafaël Kotandjyan (à droite)
Կարեն Քոչարյանն ու Նարա Շլեպչյանը (ձախից) և Ռաֆայել Քոթանջյանը (աջից)

Բացման և փակման արարողությունները, ինչպես նաև մրցանակաբաշխությունը տեղի են ունենում Երևանի ամենանշանավոր «Մոսկվա» կինոթատրոնում: Ֆիլմերը ցուցադրվում են Երևանի տարբեր կինոթատրոններում, թատրոններում, պատկերասրահներում, մշակութային կենտրոններում և զբոսայգիներից մեկում («Սիրահարների այգի»)՝ բացօթյա: Այսպիսով սա նաև առիթ է արժևորելու մայրաքաղաքի մյուս մշակութային օջախները: Սակայն հանդիպման գլխավոր վայրը մնում է «Մոսկվա» կինոթատրոնն իր դահլիճներով ու սրճարանով:

Փառատոնի մեկնարկից ի վեր նրա հիմնադիր տնօրենը կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանն է: Կինոքննադատ Միքայել Ստամբոլցյանը ծրագրերի տնօրենն է, իսկ կինոգետ Սուսաննա Հարությունյանը՝ գեղարվեստական տնօրենը:

Harutyun Khatchatryan, Mikayel Stamboltsyan et Susanna Harutyunyan
Հարություն Խաչատրյան, Միքայել Ստամբոլցյան և Սուսաննա Հարությունյան

Առաջին «Ոսկե ծիրան»ին (2004 թ. հունիսի 30-ից հուլիսի 4-ը) ներկայացված էին ընդամենը 20 երկիր (70 կինոռեժիսորներ և 148 ֆիլմ): Խաղարկային ֆիլմերի մրցույթում առաջին «Ոսկե ծիրան»ը հանձնվեց կանադաբնակ հայ կինոռեժիսոր Ատոմ Էգոյանին՝ «Արարատ» ֆիլմի համար: 2005 թ. սկսած նա փառատոնի պատվո նախագահն է:

«Ոսկե ծիրան» երկրորդ կինոփառատոնին (հուլիսի 12-17, 2005) մասնակցության հայտ էին ներկայացրել արդեն 45 երկրներ: Ժյուրին ընտրել էր 37 երկիր ներկայացնող 144 ֆիլմեր: Աշխարհահռչակ Քշիշտոֆ Զանուսին և Նիկիտա Միխալկովը պատվավոր հյուրերի թվում էին: Լավագույն լիամետրաժ խաղարկային ֆիլմի համար «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը հանձնվեց ռուսաստանցի Ալեքսանդր Սոկուրովին՝ «Արև» ֆիլմի համար: Կինոփառատոնը հանդես եկավ նախաձեռնությամբ՝ ստեղծել տարածաշրջանի կինոգործիչների ցանց, որն անվան-

« Cinéastes sans frontières » avec pour objectif d'améliorer la compréhension mutuelle au-delà des frontières politiques, idéologiques, ethniques ou confessionnelles. Vu l'importance régionale de cette initiative, le Parlement culturel européen s'est chargé de la direction de ce projet.

Lors de la 7e édition (du 11 au 18 juillet 2010) le nombre de demandes de participation a dépassé 500 propositions potentielles représentant 75 pays. 120 films (45 pays) ont été sélectionnés. L'invité d'honneur de cette édition a été la légende du cinéma mondial Claudia Cardinale qui a interprété un des rôles principal dans le film d'Henri Verneuil *Mayrig* et qui a eu l'honneur de faire l'ouverture du festival. Le festival a été ouvert avec ce dernier film. Parmi d'autres personnalités présentes citons Armen Medvedev, Stanislav Govoroukhine, Rob Nilson et d'autres. L'Abricot d'or du meilleur film de fiction a alors été décerné au film *Cosmos* de Réha Erdem (Turquie). Le prix d'honneur Paradjanov thaler a été remis à titre posthume à Henri Verneuil, Claudia Cardinale et Theodoros Angelopoulos à titre de récompense pour leurs carrières artistiques. Le 14 juillet, le jour de la fête nationale française, le festival a honoré le cinéma français en lui dédiant une journée spéciale avec le soutien de l'Ambassade de France en Arménie. La cérémonie de clôture a été précédée par la projection du film d'animation du réalisateur franco-arménien Serge Avedikian *Chienne d'histoire*. Cette dernière œuvre se verra, par ailleurs, récompenser par la prestigieuse Palme d'or du Festival de Cannes pour le meilleur film dans la catégorie animation en mai 2010.

La 8e édition s'est tenue en 2011 (11-17 juillet) et c'est Fanny Ardant qui a été l'invitée d'honneur du festival. Le spectateur arménien a ainsi découvert les origines arméniennes de la célèbre actrice. Un autre français, le cinéaste Bertrand Tavernier, a également été honoré cette année avec une rétrospective de ses films.

La 9e édition a eu lieu du 8 au 15 juillet 2012. C'est le franco-arménien Gérald Papasian, le « plus cosmopolite des comédiens de la diaspora » qui a animé « en mode Babel » (en trois langues) les cérémonies d'ouverture et de clôture du festival. 90 films ont été en compétition choisis parmi les 1 250 dont la candidature a été présentée. Par décision de l'UNESCO, Erevan a été choisi comme « Capitale du livre en 2012 ». À cette occasion, le festival a prévu une programmation spéciale sous le slogan « Livre et cinéma ».

Le 10e festival international de films *L'Abricot d'or* a eu lieu du 7 au 14 juillet 2013. Pour la dixième session jubilaire (2013) l'ouverture et la fermeture ont exceptionnellement eu lieu à l'Opéra national d'Erevan. 200 films représentants 90 pays ont été en compétition. Et cette année Garik Galstyan et Louisette Lamarche avaient décidé de couvrir l'événement pour notre gazette *Ma-sis.*

Photos: Garik Galstyan

La découverte de l'« Étoile d'Aznavour » sur la Place Aznavour d'Erevan
«Ազնավուրի աստղ»ի բացումը Երևանի Ազնավուրի անվան հրապարակում

Deux événements ont précédé la cérémonie d'ouverture officielle du festival. Le premier a été la traditionnelle bénédiction de l'abricot à l'église du 17e siècle Sourb Zoravor d'Erevan. Après un passage inattendu de jeunes majorettes arméniennes, le deuxième a été l'inauguration de l'Étoile Charles Aznavour sur le

վեց «Ռեժիսորներ առանց սահմանների»: Հետապնդվող նպատակն էր բարելավել փոխըմբռնումը՝ առանց ճանաչելու քաղաքական, գաղափարական, էթնիկական կամ կրոնական սահմաններ: Հաշվի առնելով այս նախաձեռնության տարածաշրջանային կարևորությունը՝ Եվրոպական մշակութային խորհըրդարանը ստանձնեց նախագծի ղեկավարությունը:

«Ոսկե ծիրան» յոթերորդ կինոփառատոնին (հուլիսի 11-18, 2010) մասնակցության հայտ ներկայացնողների թիվն ավելի քան 500 էր՝ 75 երկրներից: Ընտրվեցին 45 երկիր ներկայացնող 120 ֆիլմեր: Այդ տարի փառատոնի պատվավոր հյուրն էր համաշխարհային կինոլեգենդ Կլաուդիա Կարդինալեն, ով Անրի Վերնոյի «Մայրիկ» ֆիլմում կատարել էր գլխավոր դերերից մեկը: Հենց նրան էլ վերապահվել էր փառատոնը բացելու պատիվը: Մյուս ճանաչված մասնակիցներից նշենք Արմեն Մեդվեդևի, Ստանիսլավ Գովորուխինի, Ռոբ Նիլսոնի և այլոց անունները: Լավագույն խաղարկային ֆիլմի համար «Ոսկե ծիրան» մրցանակը շնորհվեց Ռեհա Էրդեմի (Թուրքիա) «Կոսմոս» ֆիլմին: Կինոյում ներդրած ավանդի համար Փարաջանովյան թալեր պատվավոր մրցանակը տրվեց Անրի Վերնոյին (հետմահու), Կլաուդիա Կարդինալեին և Թեոդորոս Անգելոպուլոսին: Հուլիսի 14-ին՝ Ֆրանսիայի ազգային տոնի օրը, կինոփառատոնը պատվեց ֆրանսիական կինոն, որին նվիրվեց հատուկ օր: Նախաձեռնության գործընկերն էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը: Փակման արարողությունից առաջ ցուցադրվեց ֆրանսահայ Սերժ Ավետիքյանի «Շների պատմությունը» անիմացիոն ֆիլմը: Ի դեպ, այս գործը 2010 թ. մայիսին Կաննի միջազգային կինոփառատոնում արժանացել էր «Ոսկե արմավենի» պատվավոր մրցանակին՝ որպես լավագույն անիմացիոն ֆիլմ:

8-րդ կինոփառատոնը տեղի ունեցավ 2011 թ. հուլիսի 11-ից 17-ը: Այս անգամ կինոհրադարձության պատվավոր հյուրն էր Ֆաննի Արդանը: Ի դեպ, հայ հանդիսատեսը բացահայտեց հանրաճանաչ դերասանուհու հայ արմատներ ունենալու փաստը: Այդ տարի մեկ այլ ֆրանսիացի՝ կինոռեժիսոր Բերտրան Տավերնիեն, ևս արժանացավ մեծարման. նրա ֆիլմերի հետահայաց ցուցադրությունն ընդգրկված էր փառատոնի ծրագրում:

9-րդ կինոփառատոնը տեղի ունեցավ 2012 թ. հուլիսի 8-ից 15-ը: Բացման և փակման հանդիսությունների «բաբելյան ձև-վով» (երեք լեզուներով) վարելու պատիվը տրված էր ֆրանսահայ Ժերալդ Փափազյանին՝ «սփյուռքի ամենակոսմոպոլիտ դերասաններից մեկին»: Մրցութային ծրագրում ընդգրկված էին 90 ֆիլմեր՝ ընտրված 1 250 հայտ ներկայացրածներից: ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ Երևանին շնորհվել էր «2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք» լինելու պատիվը: Այս առիթով կինոփառատոնը նախապատրաստել էր հատուկ ծրագիր՝ «Կինոն և գիրքը» խորագրի ներքո:

Photo : Garik Galstyan

De gauche à droite : Charles Aznavour, Alain Terzian, Lévon Sayan, Arsiné Khandjian, Atom Egoyan / Ձախից՝ աջ. Շառլ Ազնավուր, Ալեն Թերզյան, Լևոն Սայան, Արսինե Խանջյան և Ատոմ Էգոյան

pavé (Promenade des Ètoiles) de la Place Aznavour en face du cinéma *Moskva*. Après l'envol poétique avec de ballons d'une représentation de cette étoile dans le ciel bleu azur d'Arménie, le discours du chanteur légendaire a été très bref, mi-sérieux mi-blague : « On m'a grandi, grandi, mais une chose n'a pas changé : ma taille est toujours la même, elle n'est pas grande ». L'Étoile d'Aznavour est la cinquième après celle d'Hamo Beknazarian, d'Henri Verneuil, de Sergueï Paradjanov et de Rouben Mamoulian qui ont été installées sur la même place lors des Abricots d'or précédents. À la fin de la cérémonie d'ouverture, a été diffusé le film de François Truffaut *Tirez sur le pianiste* avec Charles Aznavour en rôle principal et en la présence du chanteur légendaire dans la loge d'honneur de l'Opéra.

Lors de l'ouverture du festival, un hommage a également été rendu à l'occasion des 110 ans de la naissance du célèbre compositeur Aram Khachatourian, auteur de nombreuses musiques de film à l'époque soviétique. Quelques unes de ses œuvres ont été interprétées par l'Orchestre d'État des jeunes d'Arménie. Nous avons pu découvrir, toujours à la même occasion, le chœur *Hover*, composé de voix magnifiques, dans une interprétation très original.

Cette année, les programmes hors compétition ont compris quelques sections : Rétrospectives, Avant-premières d'Erevan, Films sans frontières et autres programmes. Ajoutons aussi que cette année deux Français faisaient partie des différents jurys : Serge Avedikian (film de fiction long métrage) que nous connaissions bien, et Jean Radvaniy (Panorama arménienne), professeur à l'Institut national des Langues et Civilisations Orientales à Paris et spécialiste de l'espace postsoviétique.

C'est au film *Les Cercles* du réalisateur, scénariste et producteur serbe Srdjan Golubovic qu'a été attribué l'Abricot d'or 2013 pour le meilleur film de fiction long métrage. Ce film raconte un épisode de la guerre récente de Bosnie. C'est l'histoire de l'acte héroïque d'un soldat serbe et de ses conséquences sur son destin tragique. C'est en défendant et sauvant la vie d'un civil musulman qu'il a été brutalement assassiné par ses camarades serbes. Deux décennies après la fin de la guerre, les plaies du conflit ne sont pas encore cicatrisées. Le père du soldat assassiné a décidé de construire une église. Et c'est le fils d'un des assassins serbes qui propose son aide en plaçant le père devant un choix difficile. Le civil musulman, vivant aujourd'hui en Allemagne, se manifeste aussi… Les différentes décisions prises vont chambouler leur vie. En 2012, le film *Les Cercles* a été à plusieurs reprises récompensé au Portugal, en Allemagne, en Italie et en Bulgarie.

Les films en compétition de deux réalisateurs iraniens ont été récompensés par l'Abricot d'argent (*Parviz* de Majid Barzegar) et par le prix FIPRESCI (Fédération internationale de la presse cinématographique) (*Le dernier hiver* de Salem Salavati). *Parviz*, le deuxième film de son auteur, est l'histoire d'un quinquagénaire sans travail qui vit avec son père. Les relations entre les deux hommes ne sont pas les meilleures. Elles se dégradent encore plus lorsqu'un jour le père de Parviz annonce son intention de se remarier. Parviz est contraint de quitter la maison en laissant la place à sa belle-mère. Et il trouve une solution particulière afin de lutter contre l'injustice commise à son encontre.

La mention spéciale du jury a été décernée au film *Araf – Somewhere In-Between* de la réalisatrice turque Yeshim Ustaoglu.

Dans la catégorie Panorama arménien, l'Abricot d'or a été décerné à Maria Sahakian (Russie) pour son premier long métrage *Je vais changer mon nom*. Ce film déchiffre le monde d'Evridika qui vit avec sa mère dans un petit appartement à Alaverdi, au nord de l'Arménie. La vie privée de cette jeune fille de 14 ans tourne autour d'Internet et des images faites par son télé-

«Ոսկե ծիրան» 10-րդ միջազգային կինոփառատոնը տեղի ունեցավ 2013 թ. հուլիսի 7-ից 14-ը: Տասներորդ հոբելյանական տարում բացման և փակման հանդիսությունները բացառության կարգով տեղի ունեցան Երևանի ազգային օպերայի շենքում: Մրցույթին մասնակցում էին 90 երկիր ներկայացնող 200 ֆիլմեր: Այս անգամ Գարիկ Գալստյանն ու Լուիզեթ Լամարշը որոշել էին մեր «Մա-Սիս» պարբերականի համար լուսաբանել այս իրադարձությունը:

Կինոփառատոնի պաշտոնական բացման արարողությանը նախորդել էին երկու իրադարձություն: Առաջինը՝ ավանդական ծիրանօրհնեքն էր Երևանի՝ 17-րդ դարի Սուրբ Զորավոր եկեղեցում: Զինվորական համազգեստ հագած երիտասարդ հայուհիների անսպասելի շքերթից հետո տեղի ունեցավ երկրորդ իրադարձությունը՝ Շառլ Ազնավուրի աստղի հանդիսավոր բացումը «Մոսկվա» կինոթատրոնին հարակից Ազնավուրի հրապարակի աստղային ճեմուղու վրա: Այս աստղի սիմվոլիկ կըրկնօրինակի դեպի Հայաստանի երկնագույն երկինք փուչիկներով պոետիկական թռիչքից հետո լեգենդար երգչի խոսքը շատ հակիրճ էր՝ կես լուրջ, կես կատակ. «Մեծցրին, մեծցրին, մենակ մեկ բան չփոխվեցավ. բոյը միևնույնն է, այն մեծ չէ»: Ազնավուրի աստղը հինգերորդն էր Համո Բեկնազարյանի, Անրի Վերնոյի, Սերգեյ Փարաջանովի և Ռուբեն Մամուլյանի աստղերից հետո, որոնք արդեն տեղադրվել էին այս հրապարակում նախորդ «Ոսկե ծիրան»ների ընթացքում: Բացման արարողությանը հաջորդեց Ֆրանսուա Տրյուֆոյի «Կրակե՛ք դաշնակահարի վրա» ֆիլմի ցուցադրումը՝ գլխավոր դերակատար Շառլ Ազնավուրի ներկա-յությամբ՝ Օպերայի պատվավոր հյուրերի օթյակում:

Կինոփառատոնի բացման ժամանակ մեծարեցին նաև հանրաճանաչ երգահան Արամ Խաչատրյանին՝ նրա ծննդյան 110-ամյակի առթիվ՝ որպես խորհրդային ժամանակաշրջանի բազմաթիվ կինոֆիլմերի երաժշտության հեղինակ: Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը կատարեց նրա մի քանի ստեղծագործություններ: Այս նույն առիթով մենք կարողացանք նաև բացահայտել սքանչելի ձայներից բաղկացած «Հովեր» երգչախմբի ինքնատիպ կատարումը:

Այս տարի արտամրցութային ծրագրերը բաղկացած էին տարբեր ենթաբաժիններից՝ հետահայաց ցուցադրումներ, Երևանյան պրեմիերաներ, Ֆիլմեր առանց սահմանների և այլ ծրագրեր: Ավելացնենք նաև, որ այս տարի տարբեր ժյուրիների կազմում ընդգրկված էին երկու ֆրանսիացիներ՝ մեզ քաջ ծանոթ Սերժ Ավետիքյանը (լիամետրաժ խաղարկային ֆիլմեր) և Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի պրոֆեսոր և հետխորհրդային տարածաշրջանի մասնագետ Ժան Ռադվանին («Հայկական համայնապատկեր»):

2013 թ. «Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը լավագույն խաղարկային ֆիլմի համար շնորհվեց սերբ կինոռեժիսոր, սցենարիստ և պրոդյուսեր Սրջան Գոլուբովիչին՝ «Պարունակներ» ֆիլմի համար: Այս կինոժապավենը Բոսնիայի քսանամյա վաղեմության պատերազմից մի դրվագ է ներկայացնում: Սա սերբ զինվորի կատարած հերոսական գործողության և նրա ճակատագրի վրա ունեցած ողբերգական հետևանքների պատմությունն է: Պաշտպանելով և փրկելով մի մահմեդական քաղաքացու կյանքը՝ նա դաժանորեն սպանվում է իր յուրայինների կողմից: Պատերազմի ավարտից քսան տարի հետո հակամարտության վերքերը դեռ չեն սպիացել: Սպանված զինվորի հայրը որոշում է եկեղեցի կառուցել: Տղային սպանող սերբերից մեկի որդին առաջարկում է իր օգնությունը՝ նրան կանգնեցնելով դժվար ընտրության առջև: Փրկված և այսօր Գերմանիայում բնակվող մահմեդականը նույնպես իր աջակցությունն է առաջարկում… Կայացրած որոշումները տակնուվրա են անում նրանց կյանքը: 2012 թ. «Պարունակներ» ֆիլմին բազմիցս շնորհվել են մրցանակներ Պորտուգալիայում, Գերմանիայում, Իտալիայում և Բուլղարիայում:

Մրցույթային ծրագրում ընդգրկված երկու իրանցի ռեժիսորների ֆիլմերին շնորհվեցին «Արծաթե ծիրան» (Մաջիդ Բարզեգարի «Փարվիզ»ին) և FIPRESCI-ի (Կինեմատոգրաֆիա-

déroule dans un contexte de solitude, car elle est souvent laissée seule par sa mère qui part régulièrement en tournée avec la chorale dirigée par son ancien amant. Evridika chérit un vœu qui est de changer de nom et de devenir une nouvelle personne. Elle se plonge ainsi dans un univers imaginaire créé par elle-même. Selon Maria Sahakyan, la vocation de son film est de refléter les dimensions différentes de l'amour.

L'Abricot d'or pour le meilleur film documentaire a été réservé au film de Svetosav Stoyanov *Les derniers pirates de la mer Noire* (Bulgarie). À près de vingt ans, le capitaine Jack et ses pirates vivent sur une plage abandonnée de la mer Noire à la recherche du trésor enterré par un marin célèbre. L'Abricot d'argent est parti en Grande Bretagne pour le film de Mahdi Fleifel *Le monde qui n'est pas le nôtre*.

L'Abricot d'or du meilleur film documentaire arménien a été attribué à *Saroyanland* de Lusin Dink (Turquie), la nièce de Hrant Dink. Son premier film retrace le cheminement du célèbre écrivain américain d'origine arménienne William Saroyan, lors de son voyage effectué en 1964 à Bitlis, la ville natale de ses ancêtres. En suivant ses pas, Lusin Dink a essayé de comprendre le rapport particulier de W. Saroyan envers ses racines. Elle a trouvé chez Saroyan tout ce que chaque pèlerin arménien ressent, et c'est pour cette raison qu'elle a choisi ce thème. Elle a relaté que lors du tournage en Turquie elle n'a rencontré aucun obstacle et, qu'aujourd'hui, dans ce pays, les jeunes peuvent déjà discuter avec les anciens sur certaines questions. Son film faisait partie de ceux de la plateforme arméno-turc avec le soutien de laquelle ont déjà été réalisé 13 films. La première cinéplateforme arméno-turque a eu lieu en 2007 avec la collaboration conjointe du festival de l'Abricot d'or et de l'association stambouliote *La Culture d'Anatolie*. En 2010, la cinéplateforme a octroyé des financements aux cinéastes arméniens et turcs pour les productions conjointes de huit courts métrages. L'Ambassade des États-Unis en Arménie et la Fondation de coopération européenne sont également impliquées dans ce projet.

Photos : Garik Galstyan

Lusin Dink obtient l'Abricot d'or pour son film documentaire *Saroyanland*
Լուսին Դինքը ստացավ «Ոսկե ծիրան» մրցանակը «Սարոյանլենդ» ֆիլմի համար

Enfin, le prix du jury œcuménique a été décerné à la géorgienne Rusudan Chkonia pour son film *Souriez-vous* qui a été en compétition dans la section Films sans frontières. Son film s'est inspiré d'une histoire véritable. Lors d'un de ses tournages dans un des camps de réfugiés, R. Chkonia rencontre une mère de sept enfants qui, en 2010, a participé à un concours de beauté des mères géorgiennes afin d'empocher la somme importante destinée à la gagnante. Ainsi, dix mères, dont sept étaient issues des couches les plus pauvres de la population, s'efforcent à tout prix de gagner.

Le 13 juillet, avant la cérémonie de clôture, a été projeté hors compétition le film de Serge Avedikian et d'Alena Fetisova *Paradjanov* au cinéma *Moskva*. Cette avant-première a été accueillie par les spectateurs avec un grand enthousiasme. La salle était comble, beaucoup ont occupé les marches faute de place. Avant la projection, Serge Avedikian, visiblement ému, a demandé de l'applaudir seulement après le film. Le spectateur a pu dé-

կան մամուլի միջազգային ֆեդերացիա) (Սալեմ Սալավատիի «Վերջին ձմռանը») մրցանակները: «Փարվիզ»ը հեղինակի նկարահանած երկրորդ ֆիլմն է: Այն հիսուն տարին բոլորած իր հոր հետ ապրող մի գործազուրկի պատմություն է: Երկու տղամարդկանց հարաբերություններն այնքան էլ լավ չեն, որոնք ավելի են սրվում, երբ Փարվիզի հայրը հայտարարում է երկրորդ անգամ ամուսնանալու մտադրության մասին: Փարվիզը ստիպված է լինում հեռանալ հայրական տնից՝ տեղը զիջելով խորթ մորը: Եվ նա գտնում է յուրահատուկ լուծում, որպեսզի պայքարի իր հանդեպ անարդարության դեմ:

Ժյուրիի հատուկ մրցանակը շնորհվեց թուրք կին կինոռեժիսոր Եշիմ Ուստաօղլու «Մեջտեղում ինչ-որ տեղ» ֆիլմին:

«Հայկական համայնապատկեր» անվանակարգում «Ոսկե ծիրան» մրցանակը շնորհվեց Մարիա Սահակյանի (Ռուսաստան) «Այդ ես չեմ» առաջին խաղարկային լիամետրաժ ֆիլմին: Այս կինոժապավենը վերծանում է Հայաստանի հյուսիսում գտնվող Ալավերդի քաղաքի մի փոքրիկ բնակարանում իր մոր հետ ապրող Էվրիդիկայի հոգեկան աշխարհը: 14-ամյա աղջնակի անձնական կյանքը պտտվում է համացանցի և բջջային հեռախոսով կատարված լուսանկարների առանցքով: Նրա դեռահասության դժվարին ժամանակաշրջանն անցնում է միայնության մեջ: Էվրիդիկայի մայրն իր նախկին սիրեկանի ղեկավարած երգչախմբի հետ պարբերաբար հյուրախաղերի մեկնելու պատճառով աղջկան հաճախ է մենակ թողնում: Աղջիկը փայփայում է իր անունը փոխելու և նոր անհատականություն դառնալու փափագը: Նա, այսպիսով, ընկղմվում է իր իսկ ստեղծած երևակայական աշխարհի մեջ: Ըստ Մարիա Սահակյանի, իր ֆիլմի նպատակն է արտացոլել սիրո տարբեր չափումները:

«Ոսկե ծիրան» մրցանակը լավագույն վավերագրական ֆիլմի համար շնորհվեց Սվետոսլավ Ստոյանովի (Բուլղարիա) «Սև ծովի վերջին ծովահենները» ֆիլմին: Մոտ քսան տարի կապիտան Ջեքն իր ծովահենների հետ ապրում է սևծովյան լքված մի լողափում՝ փնտրելով մի նշանավոր նավաստու թաղած գանձը: «Արծաթե ծիրան»ը բաժին ընկավ Մեծ Բրիտանիային՝ Մահդի Ֆլեյֆելի «Աշխարհ, որ մերը չէ» ֆիլմին:

Լավագույն հայկական վավերագրական ֆիլմի համար «Ոսկե ծիրան» մրցանակը շնորհվեց Հրանտ Դինքի զարմուհի Լուսին Դինքի (Թուրքիա) «Սարոյանլենդ» ֆիլմին: Նրա անդրանիկ ֆիլմը կրկնում է հայազգի ամերիկյան գրող Վիլյամ Սարոյանի 1964 թ. անցած ճանապարհը դեպի Բիթլիս՝ իր նախնիների հայրենի քաղաք: Գնալով նրա հետքերով՝ Լուսին Դինքը փորձել է հասկանալ Վ. Սարոյանի առանձնահատուկ վերաբերմունքը դեպի իր արմատները: Սարոյանի մոտ նա գտել է այն ամենը, ինչ զգում է յուրաքանչյուր տարագիր հայ: Ահա այդ պատճառով է նա ընտրել այս սյուժեն: Լուսին Դինքը պատմեց, որ Թուրքիայում նկարահանումների ժամանակ ինքը չի հանդիպել ոչ մի խոչընդոտի և որ որոշ հարցերի շուրջ այսօր այդ երկրում երիտասարդներն արդեն կարող են բանավիճել ավագ սերնդի հետ: Հայ-թուրքական կինոպլատֆորմի աջակցությամբ արդեն իրականացվել են 13 ֆիլմեր և Լ. Դինքի կինոժապավենը դրանցից մեկն է: Հայ-թուրքական առաջին կինոպլատֆորմը տեղի է ունեցել 2007 թ.՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի և Ստամբուլի «Անադոլու Քյուլթուր» կազմակերպության համագործակցությամբ: 2010 թ. կինոպլատֆորմը հայ և թուրք կինոգործիչներին տրամադրել է ֆինանսական դրամաշնորհներ՝ ութ կարճամետրաժ ֆիլմերի համատեղ արտադրության համար: Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը և Եվրոպական համագործակցության հիմնադրամը նույնպես ներգրավված են այս ծրագրում:

L'étoile d'Aznavour s'envole / Ազնավուրի աստղի թռիչքը

Վերջապես, էկումենիկ ժյուրիի մրցանակը շնորհվեց վրացուհի

couvrir un Paradjanov travaillé par les réalisateurs et joué par Serge Avedikian dont la ressemblance physique avec son héros est impressionnante. Une fois la projection terminée, la salle a retenti d'applaudissements. Les spectateurs, les journalistes, les artistes, les critiques de cinéma ont été unanimes dans leur haute appréciation de ce long métrage. Cet accueil triomphal a été très important pour Serge Avedikian dont l'*Anouche* avait été fortement critiquée par des spectateurs arméniens et par beaucoup d'artistes il y a deux mois.

Photo : Garik Galstyan

Lors de la conférence de presse sur la cinéplatforme arméno-turque dans le Centre Tekéyan Թեքեյան կենտրոնում կայացած հայթուրքական կինոպլատֆորմին նվիրված մամուլի ասուլիսի ժամանակ

Dans le cadre du festival, des sorties touristiques ont également été organisées afin de faire connaitre des sites et des emblèmes de l'Arménie aux festivaliers de tout les pays : fête de la dolma à Sardarapat, visite de Saint-Siège d'Etchmiadzine, du musée Pardjanov, de l'usine de fabrication de cognac Ararat, *etc.* Une visite de la maison-musée d'Aram Khatchatourian a également été organisée avec un concert reprenant des œuvres du compositeur interprétées par le *Trio Khatchatourian*. À la fin a été diffusé le film de Maxime Novikov *Sonnet-Chanson* basé sur la musique d'Aram Khatchatourian et de la légende d'Akhtamar.

L'objectif poursuivi par les organisateurs du festival – l'établissement du dialogue et de liens culturels – a été pleinement atteint. Donner un souffle frais et un nouvel élan au cinéma national est une mission importante du festival. Le développement du cinéma arménien doit se faire en tant que partie intégrante du cinéma mondial. L'Abricot d'or crée cette base solide sur laquelle s'établit le dialogue avec le monde contemporain par le biais du cinéma.

Pour plus d'information vous pouvez consulter le site officiel du festival : http://www.gaiff.am.

Garik Galstyan

Photo: Garik Galstyan

Louisette Lamarche, Aude Merlin (chercheuse à l'ULB), Nouné Alexanyan (journaliste de la chaine d'État H1), Lusine Margaryan (journaliste) et Anna Karapetyan (journaliste, revue *Orer*, Prague)
Լուիզեթ Լամարշը, Օդ Մերլենը (Բրյուսելի Ազատ Համալսարանի հետազոտող), Նունե Ալեքսանյանը (Հ1 ալիքի լրագրող), Լուսինե Մարգարյանը (լրագրող) և Աննա Կարապետյանը (լրագրող, «Օրեր» ամսագիր, Պրահա)

Ռուսուդան Չկոնիայի «Ժպտացե՛ք» ֆիլմին, որը մասնակցում էր «Ֆիլմեր առանց սահմանների» մրցութային ենթաանվանակարգում: Նրա ֆիլմը ոգեշնչվել է մի իրական պատմությունից: Գաղթականների ճամբարներից մեկում նկարահանումների ժամանակ Ռ. Չկոնիան հանդիպում է յոթ զավակ ունեցող մի մոր, ով 2010 թ. մասնակցել է վրացուհի մայրերի գեղեցկության մրցույթին, որպեսզի ստանա հաղթողի համար նախատեսված մեծ գումարը: Այսպիսով, տասը մայրեր, որոնցից յոթը բնակչության ամենաաղքատ խավից էին, ջանք չեն խնայում մրցանակը նվաճելու համար:

Հուլիսի 13-ի փակման հանդիսավոր արարողությունից առաջ «Մոսկվա» կինոթատրոնում արտամրցութային կարգով ցուցադրվեց Սերժ Ավետիքյանի և Այոնա Ֆետիսովայի «Փարաջանով» ֆիլմը, որը մեծ ոգևորությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից: Դահլիճը լեփ-լեցուն էր, ազատ տեղ չլինելու պատճառով շատերը զբաղեցրել էին աստիճանները: Ցուցադրումից առաջ ակնհայտորեն հուզված Սերժ Ավետիքյանը խնդրեց ծափահարել միայն ֆիլմը դիտելուց հետո: Հանդիսատեսը հնարավորություն ունեցավ բացահայտելու Փարաջանովին՝ կինոռեժիսորների մեկնաբանությամբ: Իսկ Սերժ Ավետիքյանի կերպավորման վարպետությունն ու նմանությունն իր հերոսին չափազանց տպավորիչ էին: Ֆիլմի ավարտից հետո դահլիճը թնդում էր ծափահարություններից: Հանդիսատեսը, լրագրողները, մշակութային գործիչները, կինոքննադատները միաձայն էին այս խաղարկային ֆիլմին տված բարձր գնահատականով: Նմանատիպ փառավոր ընդունելությունը շատ կարևոր էր Սերժ Ավետիքյանի համար, որի «Անուշ»ը երկու ամիս առաջ արժանացել էր հայ հանդիսատեսի և բազմաթիվ մշակույթի գործիչների խիստ քննադատությանը:

Կինոփառատոնի ծրագրերի շրջանակներում կազմակերպվեցին նաև զբոսաշրջային այցելություններ՝ բոլոր երկրներից ժամանած փառատոնի մասնակիցներին հնարավորություն ընձեռելով ծանոթանալու Հայաստանի տեսարժան և խորհրդանշական վայրերին՝ Սարդարապատի տոլմայի տոն, այցելություններ Էջմիածինի Մայր Աթոռ, Փարաջանովի թանգարան, կոնյակի «Արարատ» գործարան և այլն: Կազմակերպվեց նաև այցելություն Արամ Խաչատրյանի տուն-թանգարան, որտեղ տեղի ունեցած համերգի ընթացքում Արամ Խաչատրյանի անվան տրիոն կատարեց երգահանի ստեղծագործությունները: Վերջում տեղի ունեցավ Մաքսիմ Նովիկովի «Սոնատ-Երգ» ֆիլմի ցուցադրումը՝ հիմնված Արամ Խաչատրյանի երաժշտության և Աղթամարի լեգենդի վրա:

Հետապնդված նպատակը՝ երկխոսության և մշակութային կապերի հաստատումը, լիարժեք իրականացվեց: Կինոփառատոնի կարևոր առաքելությունն է ազգային կինոյին նոր շունչ և եռանդ հաղորդելը: Հայկական կինոյի զարգացումը պետք է դառնա համաշխարհային կինոգործընթացի մի մասը: «Ոսկե ծիրան»ը ստեղծում է այն կայուն հիմքը, որի վրա կինոյի միջոցով հաստատվում է երկխոսություն արդի աշխարհի հետ:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել կինոփառատոնի հետևյալ պաշտոնական կայքը : http://www.gaiff.am.

Գարիկ Գալստյան

Photo : Garik Galstyan Photo : Aude Merlin

Après l'avant-première du film *Paradjanov* : (à gauche) Serge Avedikian signe des autographes, (à droite) Arsiné Khandjian, visiblement émue, serre les mains du réalisateur
«Փարաջանով» ֆիլմի պրեմիերայից հետո. ձախից՝ Սերժ Ավետիքյանը՝ ինքնագրեր բաժանելու ժամանակ, աջից՝ ակնհայտորեն հուզված Արսինե Խանջյանը սեղմում է կինոռեժիսորի ձեռքերը

EXPOSITION PHOTO : US AND COSTUMES

La Société Photographique des Universités de Lille (SPUL) a présenté l'exposition « Us and Costumes » à l'Espace Culture de l'université de Lille 1 du 14 janvier au 9 février 2013. Ses membres, photographes ou modèles, ont signé une trentaine d'œuvres représentant des étudiantes et étudiants des universités lilloises habillés dans leur costume national. Il s'agissait d'illustrer l'incroyable diversité culturelle de cette population jeune, douée, compétente, souriante, qui, malgré l'éloignement géographique, reste toujours attachée à ses racines par son habillement coutumier. Des originaires d'Asie, d'Afrique du Nord et sub-saharienne, d'Amérique latine et d'Europe de l'Est l'ont ainsi démontré. Cet attachement est particulièrement vrai pour l'Arménie, représentée de belle manière dans cette exposition par Lianna Avetisyan vêtue pour l'occasion en danseuse traditionnelle. Le succès de cette manifestation incite la SPUL à préparer une suite « Us and Costumes N°2 ». Donc, si vous avez un costume, une pièce de vêtement, une parure ou même un bijou traditionnel et que vous êtes étudiant dans une des universités de Lille, n'hésitez pas à contacter la SPUL à l'adresse suivante spulille@univ-lille1.fr.

Photo : Bernard Dupont

Bernard Dupont
enseignant à l'université de Lille 1, photographe,
membre de la SPUL et de l'association *Ararat*

Photo : Garik Galstyan

Bernard Dupont face à la photo de Lianna Avetisyan choisie pour l'exposition
Բ. Դյուպոնը՝ Լ. Ավետիսյանի ցուցահանդեսի համար ընտրված լուսանկարի առջև

TRACES ARMÉNIENNES DANS LE NORD

ÉVANGILES EN ARMÉNIEN (17e SIÈCLE) À L'UNIVERSITÉ DE LILLE 3

À l'abri de son silo à livres, la bibliothèque centrale de Lille héberge la réserve commune des trois universités lilloises. Lointain descendant de la bibliothèque de l'Université douaisienne, ce fond comporte aujourd'hui 13 000 volumes antérieurs à 1810. 1 200 d'entre eux, parmi les plus précieux, ont été légués à la communauté scientifique lilloise par le bibliophile Edmond Agache. Cette collection renferme une trentaine de manuscrits

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ. ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՏԱՐԱԶՆԵՐ

2013 թ. հունվարի 14-ից մինչև փետրվարի 9-ը Լիլի համալսարանների լուսանկարչական միությունը (ԼՀԼՄ) Լիլ 1 համալսարանի Մշակույթի սրահում ներկայացրեց «Սովորույթներ և տարազներ» ցուցահանդեսը: Նրա անդամները, լուսանկարիչներն ու բնորդները ստեղծել էին մոտ երեսուն գործ, որոնք պատկերում են Լիլի համալսարանների ազգային տարազներ հագած ուսանող-ուսանողուհիների: Նպատակն էր ցույց տալ այս շնորհալի, քաջատեղյակ և ժպտերես երիտասարդների մշակութային անհավանական բազմազանությունը, ովքեր չնայած աշխարհագրական հեռավորությանը՝ ավանդական հագնելիքով մնում են մշտապես կապված իրենց արմատների հետ: Լինելով ծագումով Ասիայից, Հյուսիսային և Սուբ-Սահարյան Աֆրիկայից, Լատինական Ամերիկայից և Արևելյան Եվրոպայից՝ նրանք հենց դա էլ ցուցադրեցին: Այս կապվածությունը հատկապես հատկանշական է Հայաստանի համար, որը լավագույն ձևով ցուցահանդեսում ներկայացված էր Լիաննա Ավետիսյանի միջոցով, ով այս առիթով հագել էր պարուհու ազգային զգեստ: Այս միջոցառման հաջողությունը դրդում է ԼՀԼՄ-ին նախապատրաստել ցուցահանդեսի շարունակությունը՝ «Սովորույթներ և տարազներ N°2»: Այսպիսով, եթե դուք ունեք որևէ ազգային տարազ, հագուստի մաս, պաճուճանք կամ անգամ զարդ, և եթե դուք Լիլի համալսարաններից մեկի ուսանողն եք, ապա մի՛ վարանեք կապվել ԼՀԼՄ-ի անդամների հետ հետևյալ հասցեով՝ spulille@univ-lille1.fr.

Dupon

Photo : Bernard Dupont

Բեռնար Դյուպոն,
Լիլ 1 համալսարանի դասախոս, լուսանկարիչ,
ԼՀԼՄ-ի և «Արարատ» միության անդամ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐ ՆՈՐԴԻ ՇՐՋԱՆՈՒՄ

17-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՎԵՏԱՐԱՆ՝ ԼԻԼ 3 ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Լիլի կենտրոնական գրադարանի գրքերի շտեմարանի հատուկ պահոցներում առանձնահատուկ տեղ ունի Լիլի երեք համալսարանների ընդհանուր գրապահոցը: Այս ֆոնդը Դուեի համալսարանի գրադարանի գործը շարունակողն է: Այն այսօր ունի մինչև 1810 թ. գրված կամ տպագրված 13 000 հատոր գիրք, որոնցից ամենաարժեքավոր 1 200-ը Լիլի գիտական հանրությանն է կտակել գրքասեր Էդմոնդ Ագաշը: Այս հավաքածուն իր մեջ ամփոփում է մոտ երեսուն միջնադարյան ձեռագրեր, որոնցից մեկն էլ 17-րդ դարի հայկական ձեռագիրն է՝ գրված Կապադովկիայի Կեսարիայում՝ Օսմանյան կայսրության սրտում: Այս ձեռագիրը սփյուռքի քրիստոնյա հայ համայնքի աշխատանքի արգասիքն է, որը մինչև 18-րդ դարը պահպանել է քրիստոնեական տեքստերի նույն արհեստանոցում կատարված կրկնօ-

médiévaux et, parmi eux, ce manuscrit arménien du 17^{e} siècle. Réalisé au cœur de l’Empire Ottoman, à Césarée de Cappadoce, ce manuscrit est le fruit du travail d’une communauté chrétienne arménienne de la diaspora qui a fait perdurer jusqu’au 18^{e} siècle la tradition médiévale de copie, enluminure et reliure de textes chrétiens dans un même atelier leur conférant ainsi une grande unité stylistique.

La reliure du manuscrit est faite de plaques d’argent repoussées.
Ձեռագրի կազմը ստեղծված է արծաթե դրոշմազարդված թիթեղներից:

La reliure de ce manuscrit est faite de plaques d’argent repoussées montées sur ais de bois et finement articulées par des charnières. Les différentes scènes qui la composent synthétisent le mystère christologique. Le plat supérieur montre ainsi une adoration des bergers et une adoration des mages. Le plat inférieur montre une scène inédite dans la série des manuscrits de Césarée : l’envoi en mission apostolique par le Christ ressuscité.

Le manuscrit est écrit sur du parchemin, de la peau de veau tanné. L’examen minutieux de la forme de l’écriture, le ductus, met en évidence les mains multiples qui ont travaillé à la copie de ce texte. L’écriture, peu habituelle pour nos yeux occidentaux, est du boloragir, une écriture arménienne.

Marc est représenté en pleine page, dans un décor architectural tendu d’un dé.
Մարկոսը ներկայացված է ամբողջ էջի վրա՝ ճարտարապետական կոթողներն իրար կապող ժապավենի ֆոնի ներքո

Ce manuscrit est un tétra d’évangile, c’est-à-dire l’ensemble des quatre Évangiles selon l’ordre canonique Mathieu, Marc, Luc et Jean. Ils sont précédés, selon un principe très classique, de la lettre d’Eusèbe à Carpien sur les canons de concordance. Viennent ensuite les canons eux-mêmes, astucieux système de colonnes permettant aux lecteurs de mettre en regard des passages des Évangiles et, plus particulièrement, des épisodes de la vie du Christ, communs à plusieurs évangélistes.

Chaque Évangile est précédé d’un portrait d’un évangéliste selon les canons traditionnels, c’est-à-dire accompagné de son symbole tel qu’il figure dans l’Apocalypse. Mathieu, sous un riche décor végétal, est représenté ailé en référence à la généalogie du Christ. Marc est représenté en pleine page, dans un décor

րինակության, հրատարակության և կազմավորման միջնադարյան ավանդույթը՝ նրանց տալով ցայտուն ոճական միասնություն:

Photos Garik Galstyan

Ձեռագրի կազմը ստեղծված է փայտե հենքերը պատող արծաթե դրոշմազարդված թիթեղներից, որոնք նրբորեն համակցված են ամրակներով: Կազմի վրա ներկայացվող տարբեր տեսարաններն ամփոփում են քրիստոնեական միստերիան: Այսպիսով առաջին կազմի վրա պատկերված են ինչպես հովիվների, այնպես էլ մոգերի երկրպագության տեսարանները: Կազմի վերջին էջի վրա պատկերված է Կեսարիայի ձեռագրերի համար մի աննախադեպ տեսարան՝ հարություն առած Քրիստոսի առաքելությունը:

Ձեռագիրը գրված է մագաղաթի՝ հորթի հատուկ մշակված կաշվի վրա: Հատուկ գրելաոճի ձևի մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվում է, որ այս տեքստի կրկնօրինակումն արել են բազմաթիվ գրիչներ: Արևմուտքի համար այս անսովոր գրելաոճը կոչվում է բոլորագիր՝ հայկական գրելաոճ:

Այս ձեռագիրը քառամաս Ավետարան է՝ ըստ կանոնակարգի՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի չորս Ավետարանների միասնություն: Ըստ դասական սկզբունքի՝ սրանք սկսվում են համաձայնության տախտակների վրայի Եվսեբոսից՝ Կարպիանոսին գլխագրերով:. Հետո գալիս են բուն կանոնները՝ սյունյակների հնարամիտ մի համակարգ, որն ընթերցողին հնարավորություն է տալիս համեմատելու Ավետարանների դրվագները՝ նվիրված, հատկապես, Քրիստոսի կյանքին, ինչն ընդհանուր է շատ ավետարանիչների համար:

Dans un décor similaire, on trouve Luc faisant face au taureau
Նույն ձևավորման ներքո կարելի է տեսնել Ղուկասին՝ ցուլին դեմ հանդիման

Ըստ ավանդական կանոնների, յուրաքանչյուր Ավետարան սկսվում է ավետարանիչի դիմանկարով, այսինքն՝ ուղեկցվում է Ապոկալիպսի մեջ ներկայացված խորհրդանիշով: Հարուստ բուսական ձևավորման ներքո Մատթեոսը ներկայացված է թևերով, ինչը վկայում է Քրիստոսի ծագումնաբանությունը: Մարկոսը ներկայացված է ամբողջ էջի վրա՝ ճարտարապետական կոթողներն իրար կապող ժապավենի ֆոնի ներքո: Առյուծը՝ նրա խորհրդանիշը, անմիջականորեն ներառված է երեսպատման էջի բուն տեքստի մեջ: Նույն ձևավորման ներքո կարելի է տեսնել Ղուկասին՝ ցուլին դեմ հանդիման: Դա հիշեցնում է այն զոհաբերությունը, ինչով սկսվում է այս Ավետարանը: Սուրբ Հովհաննեսը պատկերված է նստած՝ Ավետարանը գրելիս: Նա,

architectural tendu d'un dé. Son symbole, le lion, est directement intégré dans le corps du texte sur la page en regard. Dans un décor similaire, on trouve Luc faisant face au taureau, rappel du sacrifice qui ouvre cet Évangile. Saint Jean est assis, il écrit son Évangile. Sa tête, délicatement penchée, cherche l'inspiration divine. Face à lui, un personnage jeune et imberbe écrit. C'est peut être son scribe, Procoro. Il est abrité sous une grotte qui rappelle son exil à Patmos. Dans le corps du texte, les têtes des chapitres sont rubriquées pour plus de lisibilité. Et l'on aperçoit encore, ici ou là, la réglure, le cadre tracé par les copistes pour la mise en place de son texte. Les majuscules prennent ici, dans la plus grande fantaisie, la forme d'anges ou d'oiseaux et épousent gracieusement les contours du texte.

Entré en 1921 dans les collections universitaires, ce manuscrit a été remis en lumière en 2007 par un groupe de chercheurs américains. À ce jour, on estime que 35 manuscrits issus de l'atelier de Césarée ont été conservés. Celui-ci occupe une place de choix parmi les volumes les plus précieux de la réserve interuniversitaire.

Direction de la Recherche / Service Commun de la Documentation, Université Lille 3.
Constance Bienaimé / Cécile Martini

N.B. Selon les données déchiffrées par l'historien Raymond Kévorkian de la note de mémoire[1] de cet Évangile

1. Commanditaire du manuscrit : Simavon, « pour l'offrir en sa mémoire à l'église Sourb Sargis [Saint Serge] »
2. Lieu de copie : « Écrit dans la ville d'Amasia, du temps du saint patriarche Nigoghos »
3. Copiste : le Père Martiros
4. Date de copie : « En l'an des Arméniens 1139 » [=1690]
5. Relieur : Mikayel

VIVEZ, LES ENFANTS, MAIS PAS COMME NOUS

Ces sages paroles de l'immortel Hovhannes Toumanian sont devenues l'épigraphe pour la fête de fin d'année des élèves de l'école arménienne de dimanche.

Le 30 juin, le lieu traditionnel de rassemblement de l'association *Ararat* a été comble : les grand-mères et grand-pères, les pères et mères, les frères et sœurs se sont réunis ici pour écouter et apprécier les récitations des élèves de l'école.

Les professeurs – Mesdames Susanna Mughnetsyan et Ruzanna Askaryan, Monsieur Haïk Ghambarian – étaient aussi

Pendant le spectacle des plus petits — Ամենափոքրիկների հանդեսի ժամանակ

[1] Une sorte de colophon : note finale d'un manuscrit ou d'un livre imprimé où on retrouve les indications concernant l'auteur de l'ouvrage, la date de fabrication, l'éditeur, *etc*.

գլուխը փոքր-ինչ խոնարհված, աստվածային ներշնչանք է փնտրում: Նրա առջև ինչ-որ բան է գրում մի պատանյակ, ով, հավանաբար, նրա գրագիր Պրոկորոն է: Նա պատսպարվել է պաթմոսյան աքսորը հիշեցնող քարանձավի մեջ: Հիմնական տեքստի գլուխների առաջին տողերի գլխատառերը շարադրանքը դարձնում են ավելի ընթեռնելի: Համարյա ամենուրեք կարելի է նաև նկատել կրկնօրինակողների նշած շրջանակը՝ տեքստը տեղադրելու համար: Այստեղ, ամենայն երևակայությամբ, հրեշտակների կամ թռչունների տեսքով գլխատառերը նրբագեղորեն միավորում են տեքստը:

1921 թ. ի վեր ընդգրկված լինելով համալսարանական հավաքածուների մեջ՝ այս ձեռագիրն արժևորվել է 2007 թ.՝ մի խումբ ամերիկյան հետազոտողների կողմից: Համարում են, որ Կեսարիայի ձեռագրատանը ստեղծված ձեռագրերից 35-ը հասել են մինչև մեր օրերը: Այս ձեռագիրը միջհամալսարանական գրապահոցի ամենաարժեքավոր հատորների շարքում զբաղեցնում է ուրույն տեղ:

Լիլ 3 համալսարանի հետազոտությունների բաժին / Վավերագրերի ընդհանուր բաժին
Կոնստանս Բիենեմե / Սեսիլ Մարտինի

Հ.Գ. Ավետարանի հիշատակարանի[2] վերծանած տվյալներն՝ ըստ պատմաբան Ռայմոնդ Կևորկյանի.

1. Ձեռագրի պատվիրատու՝ Սիմավոն՝ «ի հիշատակ իրեն Սուրբ Սարգիս եկեղեցուն նվիրելու համար»
2. Կրկնօրինակման վայրը՝ «Գրված Ամասիայում՝ սուրբ հայրապետ Նիկողոսի օրոք»
3. Կրկնօրինակող՝ Հայր Մարտիրոս
4. Կրկնօրինակման տարեթիվը՝ «Հայկական տոմարով 1139» [=1690]
5. Կազմող՝ Միքայել

ԱՊՐԵ՛Ք, ԵՐԵԽԵՔ, ԲԱՅՑ ՄԵԶ ՊԵՍ ՉԱՊՐԵՔ

Անմահ Հովհաննես Թումանյանի այս իմաստուն խոսքերն ասես բնաբան դարձան կիրակնօրյա հայկական դպրոցի սաների տարեվերջյան հանդիսության համար:

Հունիսի 30-ին «Արարատ» միության ավանդական հավաքատեղին բազմամարդ էր. տատիկներ-պապիկներ, հայրեր-մայրեր, քույրեր-եղբայրներ այստեղ էին հավաքվել՝ ունկնդրելու և գնահատելու դպրոցի սաների ելույթները:

Երեխաներից պակաս հուզված չէին նաև ուսուցիչները՝ տիկիններ Սուսաննա Մուղնեցյանն ու Ռուզաննա Ասկարյանը, պարոն Հայկ Ղամբարյանը: Այդ նրանց նվիրվածության և ջանքերի շնորհիվ է, որ այսօր մեր երեխաները տառաճանաչ ու գրաճանաչ են դարձել, հանգամանք, որ մեր օրերում շատ է կարևոր-

Les enseignants de l'école arménienne de dimanche Susanna Mughnetsyan, Haïk Ghambarian et Ruzanna Askaryan — Կիրակնօրյա հայկական դպրոցի ուսուցիչներ Սուսաննա Մուղնեցյանը, Հայկ Ղամբարյանը և Ռուզաննա Ասկարյանը

[2] Ձեռագիր մատյանների վերջին էջերում տեղադրված ամփոփում, որը տվյալներ է հաղորդում գրքի հեղինակի, լույս տեսնելու տարեթվի, հրատարակիչի մասին և այլն:

émus comme les enfants. C'est grâce à leur dévouement et leurs efforts qu'aujourd'hui nos enfants savent lire et écrire. De nos jours, cette circonstance a une importance pour la con-servation de l'identité arménienne, pour atténuer en partie la menace de l'assimilation dans les terres étrangères.

Les plus émus étaient les élèves de la plus jeune classe – les enfants de 5 à 10 ans dont les récitations étaient dédiées à la langue de Machtots. En récitant les couplets qui commencent par chaque lettre de l'alphabet comme s'ils donnaient un serment de fidélité à notre précieux arménien. Après, la scène est passée aux enfants de la classe des plus grands. Cette partie de la prestation a été une sorte d'éloge à l'Arménie, de nostalgie envers l'Arménie. Les magnifiques poèmes des immortels de la poésie arménienne – Tcharents, Sévak, Sarian, Chiraz et autres – se sont succédés. Chaque récitation des enfants a été récompensée par des applaudissements chalheureux. Tout le monde était content : les spectateurs, professeurs et élèves.

En paroles de reconnaissance, Jaqueline Kasparian dans son discours a remercié les professeurs en comparant leur dévouement et travail avec la mission du Saint Machtots. Ella a également adressé des mots de gratitude à Madame Louisette Lamarche, présidente de l'association arménienne de Lille *Ararat*, grâce au travail et aux efforts inlassables de laquelle, de nos jours, les Arméniens résidant à l'extrême nord de la France ont l'opportunité de se rassembler et de s'unir. Même si loin de l'Arménie, ils peuvent vivre avec la nostalgie et l'actualité de l'Arménie.

Le discours poétique du professeur Haïk Ghambarian a également été émouvant. Avec le précepte génial de Hovhannes Toumanian – « Vivez, les enfants, mais pas comme nous » – il a exhorté les jeunes Arméniens de Lille à conserver leur identité nationale, à vivre plus heureux et de manière plus aisé que leurs grands-parents et parents.

Jacqueline Kasparian

Le lieu traditionnel de rassemblement de l'association *Ararat* a été comble.
«Արարատ» միության ավանդական հավաքատեղին բազմամարդ էր:

NOUVEAU PARTAGE DES CULTURES

La Ville de Mons en Barœul a une nouvelle fois sollicité les associations monsoises pour l'organisation des *Dimanches du Barœul* en 2013. L'objectif était d'animer cinq dimanches de juillet et août, pour les Monsois ne partant pas en vacances, autour du thème « Goûts et couleurs du monde ». Les week-ends se sont ainsi déclinés entre les thématiques suivantes : la Méditerranée, le Texas, le Nord (Fanfare de Ch'Nord), l'Amérique du Sud et l'Orient. À chaque dimanche, il s'agissait d'organiser un repas pour 200 convives, d'avoir des animations musicales et d'autres actions déclinant la thématique du jour. Plus de vingt associations se sont mobilisées pour mener ces projets.

վում հայ ինքնության պահպանման, օտար ափերում ուծացման վտանգից մասամբ փրկվելու համար:

Առավել հուզված էին կրտսեր դասարանի աշակերտները՝ 5-10 տարեկան փոքրիկները, որոնց արտասանությունները նվիրված էին մեսրոպատառ հայերենին: Յուրաքանչյուր տառով սկսվող քառյակ ասմունքելով՝ նրանք ասես իրենց հավատարմության երդումն էին տալիս մեր ոսկեղենիկ հայերենին: Այնուհետև բեմահարթակը տրամադրվում է ավագ դասարանի երեխաներին: Հանդեսի այս հատվածն արդեն ասես գովք էր առ Հայաստան, կարոտ էր առ Հայրենիք: Միմյանց էին հաջորդում հայ պոեզիայի անմահների՝ Չարենցի, Սևակի, Սարյանի, Շիրազի և այլոց հիասքանչ քերթվածքները: Երեխաների յուրաքանչյուր ելույթ վարձատրվում էր ջերմ ծափահարություններով: Գոհ էին և՛ հանդիսականները, և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները:

Որպես երախտագիտության խոսք, իր ելույթում Ժաքլին Կասպարյանը շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին՝ նրանց նվիրվածությունն ու գործը համեմատելով Սուրբ Մաշտոցի առաքելության հետ: Նա նաև իր երախտիքի խոսքն ուղղեց լիլահայ համայնքի «Արարատ» միության նախագահ տիկին Լուիզեթ Լամարշին, որի անդուլ ու նվիրված աշխատանքի ու ջանքերի շնորհիվ այսօր Ֆրանսիայի ծայր հյուսիսում բնակվող հայերը հնարավորություն ունեն միավորվելու ու մեկտեղվելու, թեպետ Հայաստանից հեռու, բայց Հայաստանի կարոտով ու կյանքով ապրելու համար:

Les photos de cet article : Garik Galstyan

La classe des plus grands / Պատանիների դասարանը

Հուզիչ էր նաև ուսուցիչ Հայկ Ղամբարյանի պոետիկ ելույթը: Հովհաննես Թումանյանի հանճարեղ պատգամով՝ «Ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք», նա ասես կրտսեր լիլահայերին պատգամեց՝ պահպանելով ազգային ինքնությունն ապրել առավել երջանիկ ու բարեկեցիկ կյանքով, քան իրենց ապուպապերը, հայրերն ու մայրերը:

Ժակլին Կասպարյան

ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մոնս ան Բարոլի քաղաքապետարանը հերթական անգամ քաղաքում գրանցված միություններին խնդրել էր ակտիվ մասնակցություն ունենալ 2013 թ. «Բարոլի կիրակիներ»ի անցկացման գործում: Նպատակն էր հուլիս և օգոստոս ամիսների հինգ կիրակիների կազմակերպումը արձակուրդ չմեկնող մոնսեցիների համար՝ «Աշխարհի ճաշակներն ու գույները» խորագրի ներքո: Հանգստյան օրերը նվիրված էին հետևյալ թեմաներին՝ Միջերկրական տարածաշրջան, Տեխաս, Նորդ (Ճ'Նորդ նվագախումբ), Հարավային Ամերիկա և Արևելք: Ամեն կիրակի հարկավոր էր ճաշկերույթ կազմակերպել 200 հյուրերի համար, կազմակերպել երաժշտական և այլ տիպի միջոցառումներ՝ ըստ օրվա ընտրված թեմայի: Ավելի քան քսան միություններ համախմբվել էին այս ծրագրերի իրականացման շուրջը:

L'association *Ararat* avait toute sa place dans le dimanche consacré à la Méditerranée. Mais beaucoup d'entre nous étaient en vacances, notamment les pratiquants de la danse arménienne. C'est Armen, Arminé, Gayané, Kristina, Lilit, Gohar et Bella qui ont relevé le défi et ont brillamment représenté notre art culinaire. Nos six dames ont préparé un *borsch* pour 200 personnes. Armen, avec l'aide de certains maris, a récupéré les marmites de soupe et les a portées au Parc du Barœul le jour J.

Ainsi, en ce 14 juillet donc des Monsois, membres d'associations, élus et habitants, ont goûté à la cuisine arménienne, mixée de cuisine slave, avec ce *borsch*. Au menu on avait aussi des galettes, chich-kebab et kadayif turques et des pâtisseries grecques. Narine, Edouard, Haïk, Vardan, Gayané et Armen ont aussi aidé au service de ce *borsch*, sa présentation n'étant pas habituelle pour les jeunes serveurs bénévoles des juniors associations pas trop expérimentés qui avaient commencé à le servir en assette plates comme ... un plat en sauce.

Photo : Narine Bazinian

Haïk, Nariné et Gayané au service du *borsch*

Bien sûr, nous avons eu quelques petits incidents pendant les préparatifs comme, par exemple, celui de Haïk, tenant la grande marmite de *borsch*, qui a été arrosé de soupe dans la voiture d'Armen lors du transport. Quelques gouttes sont aussi tombées sur les convives pendant le service. Mais, justement, ce sont ces anicroches maladroites qui amènent des petits sourires sur nos visages quand on se rappelle de ce fameux jour J.

Notre petite troupe a ainsi pu discuter avec les autres associations présentes, parler de notre culture et profiter des animations de l'après-midi : Fanfare, danses turques et grecques, ballade en calèche contée sur le passé de la Ville de Mons, chorale des aînés à l'accordéon, théâtre, origami, pyrogravure, fabrication de chapeaux, création de poupées en chiffon, animation jardin et ferme, atelier brochette de fruits…

Il y a fort à parier que l'année prochaine nous serons à nouveau sollicités pour mettre en valeur notre arménité…

Louisette Lamarche

ASSOCIATION ARARAT
1 Place Vauban, appt. 122
59 370, Mons en Baroeul

BULLETIN D'ADHESION

Nom, Prénom ____
Adresse ____
Mail ______________________ Téléphone ______________
Adhère à l'association ARARAT pour l'année 2013/2014
a payé une adhésion de 15 euros (par famille)
(Date et Signature)

«Արարատ» միությունն իր ուրույն տեղն էր գտել Միջերկրական տարածաշրջանին նվիրված կիրակիի շրջանակներում: Սակայն մեզանից շատերը գնացել էին արձակուրդ, մասնավորապես հայկական պարի խմբում ներգրավված անդամները: Արմենը, Արմինեն, Գայանեն, Քրիստինան, Լիլիթը, Գոհարը և Բելլան «ընդունեցին մարտահրավերը» և փայլուն ձևով ներկայացրեցին մեր խոհանոցային արվեստը: Մեր վեց կանայք 200 հոգու համար բորշչ էին եփել: Արմենը որոշ ամուսինների օգնությամբ հուլիսի 14-ին՝ Ֆրանսիայի ազգային տոնի օրը, հավաքել էր պատրաստված ապուրով կաթսաները և տեղափոխել Բարոլի այգին:

Այսպիսով, հուլիսի 14-ին բորշչի միջոցով մոնսաբնակ քաղաքացիներ, միությունների անդամներ, ավագանու ընտրյալներ համտեսեցին սլավոնականի հետ համակցված հայկական խոհանոցը: Ճաշացուցակում կային նաև թուրքական բլիթներ, շիշ-քաբաբ, կադայիֆ և հունական քաղցրավենիքներ: Նարինեն, Էդուարդը, Հայկը, Վարդանը, Գայանեն և Արմենը նաև օգնեցին բորշչի սպասարկման գործում, որի մատուցումը այնքան էլ սովորական չէր շատ փորձ չունեցող պատանեկան միությունների երիտասարդ կամավոր մատուցողների համար, ովքեր սկսել էին այն լցնել ոչ խորը ափսեների մեջ որպես ... կերակրահյութ:

Իհարկե, նախապատրաստական աշխատանքների ժամանակ մենք ունեցանք որոշ փոքրիկ պատահարներ: Օրինակ, Արմենի մեքենայով բորշչի մեծ կաթսան փոխադրելու ժամանակ այն թեթևակիորեն շուռ եկավ Հայկի վրա: Սպասարկման ժամանակ մի քանի կաթիլ էր թափվեց հյուրերի վրա: Սակայն հենց այս հանպատրաստից պատահարներն են, որ ժպիտ են առաջացնում, երբ հիշում ենք այդ նշանավոր՝ հուլիսի 14-ի օրը:

Մեր փոքրիկ խումբն այսպիսով կարողացավ շփվել ներկա մյուս միությունների հետ, պատմել մեր մշակույթի մասին և մասնակցել օրվա երկրորդ կեսին կազմակերպված միջոցառումներին՝ նվագախմբի, հունական և թուրքական պարերի ելույթներ, ավանակալուծ կառքերով զբոսանք՝ Մոնսի պատմությունը ներկայացնող զբոսավարի ուղեկցությամբ, մեծահասակների երգչախումբ՝ ակորդեոնի նվագակցությամբ, թատրոն, ստվարաթղթից իրերի պատրաստում, փայտի դաջում, գլխարկների և կտորից տիկնիկների պատրաստում, այգեգործության և ֆերմերային խմբակ, փայտաձողիկների վրա մրգերի ներկայացում և այլն:

Կարող ենք հուսալ, որ հաջորդ տարի մեզ կրկին կհրավիրեն ևս մեկ անգամ արժեվորելու մեր հայ լինելը…

Լուիզեթ Լամարշ

PREMIER TOURNOI DE NARDIS FÉMININ
ԿԱՆԱՆՑ ՆԱՐԴՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՄՐՑԱՇԱՐԸ

. Le 2 juin 2013 a eu lieu le premier tournoi de nardis pour les dames qui n'osent pas se confronter à leurs homologues masculins lors des autres tournois de l'association *Ararat.*

. 2013 թ. հունիսի 2-ին տեղի ունեցավ նարդու անդրանիկ մրցաշարը՝ կանանց համար, ովքեր խուսափում են տղամարդկանց հետ հակամարտությունից՝ մեր միության կազմակերպած բազմաթիվ մրցաշարերի ժամանակ:

Photos: G.Galstyan, A.Hakobyan

À gauche : les gagnantes du rournoi de nardis féminin Nelli Papanyan (1ère) et Narine Bazinian (2e), en haut : les participantes du tournoi
Ձախից՝ նարդու կանանց մրցաշարի հաղթողները՝ Նելլի Պապանյանը (1-ին) և Նարինե Բազինյանը (2-րդ), վերևում՝ մրցաշարի մասնակիցները



Ուղղահայաց

1.Արքայական հրամանների երաշխավորը: 2. Ճապոնական արքայանիստ քաղաք 17-րդ դարում: 3. Բագրատունյաց չքնաղ մայրաքաղաքի ներկայիս վիճակը: 4. Սպարտայի թագուհի, տրոյական պատերազմի կռվախնձորը: 5. Մենդելսոնի «օրհնությունը» կամ «անեծքը»՝ օտար լեզվով: 6 Արքաների ամառանոց, զորակայան, մշակութային համալիր. այսօր՝ միայն տաճար: 9. Գեղեցիկ արքա վերակենդանացնող ասորական շուն: 11. Մահմեդական մայրաքաղաք Եվրոպայում: 13. Հայ մեծ արքա, ում դավադրաբար սպանողի որդին լուսավորեց Հայաստանը: 15. Զինված երամակ: 16.Ռուսական Տիգրանակերտ: 17. Արքաների «մամլո խոսնակ»: 18. Հայ երաժշտության արքայի մոր «տիտղոսակիր» անունը: 19. Բոնապարտին լույս աշխարհ բերող կնոջ անունը: 21. Ֆ. Նիցշեն նրան համառորեն խոսեցնում էր, Ռ. Շտրաուսը՝ հնչեցնում, քրիստոնեություն ընդունած հայերը՝ լռեցնում: 25. Պետություն՝ Արամեից մինչ Ռուսա: 26. Երկնային արքայություն երկրի վրա՝ ըստ Բուդդայի: 27. Թրաֆալգարի հրապարակում վեր խոյացող ծովակալ: 31. Հայկական դպրոցի Տալյան ազգանունով ուսուցչուհի՝ Ս.Եսենինի սիրո մուսաներից: 32. Նացիստական կուսակցության մոլի համակիր, կոշկեղենի հմուտ գիտակ Ադոլֆ Դասլերի հիմնած շատ հարգարժան ապրանքանիշը: 33. Ծննդատներում հաճախ հիշատակվող հռոմեական կայսր: 35. Կատաղի, մոլեգին: 37. Մի կողմում կողակիցն է, մյուսում՝ փիղը: 38. Արքա, որի օրոք Կարսը դարձավ հայոց մայրաքաղաքը:

Հորիզոնական

7. Հայ արքայի կառուցած և «գողերով» բնակեցված քաղաք: 8. Ծովից ծով Հայաստանի առաջին տիկինը: 10. Կոտակի կտակած կանաչ կապիտալը: 12. Հայոց առաջին քրիստոնյա թագուհին: 14. Ազնվական ցեղերի դաշինք՝ երկու կրակի՝ Սյունիների և փղերի արանքում: 17. Ոչ այնքան բուսակեր հայ արքա՝ Աշոտ ... 20. Բռնակալներին «հոգեհարազատ» հոգեկան հիվանդություններից: 22. Նշանակված ավատատեր Հայաստանի 3-րդ Հանրապետությունում: 23. Ժամանակակից արքայական ապրելակերպ, ոճ: 24. Հայերին ծովից ծով Հայաստան վերադարձնող ԱՄՆ նախագահ: 28. Օտար հողի վրա ստեղծված բազմադարյան հայկական թագավորություն: 29. Սպարտակի ապստամբությունը ճնշած տրիումֆակիր զորավար, որի գլուխը ցուցադրվեց Արտաշատի թատրոնում: 30. Այդ արքայազնը տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու խնդիր ուներ՝ լինե՞լ, թե չլինել: 34. Անին շատ գեղեցկացրած հայոց թագուհի, Գագիկ I-ի (990-1020 թթ.) կինը: 36.Արգիշտի ...յովիչ: 38. Երկնքի իրավիճակ: 39. Երեք ցար, ութ Հռոմի պապ: 40. Մեսրոպ Մաշտոցի Սերժ Սարգսյանը:

Հայկ Ղամբարյան

Պատասխաններ

Ուղղահայաց՝ 1. Բանակ: 2. Նարա: 3. Ավերակ: 4. Հեղինե: 5.Մարշ: 6. Գառնի: 9. Արալեզ: 11. Տիրանա: 13. Խոսրով: 15. Հեծելազոր: 16. Պետրոգրադ: 17. Մունետիկ: 18. Թագուհի: 19. Լետիսիա: 21. Զրադաշտ: 25. Ուրարտու: 26.Նիրվանա: 27. Նելսոն: 31. Շահանե: 32. «Ադիդաս»: 33. Կեսար: 35. Ամեհի: 37. Արքա (շախմ.): 38. Աբաս:

Հորիզոնական՝

7. Արշակավան: 8. Կլեոպատրա: 10. Անտառ: 12. Աշխեն: 14. Վարդանանք: 17. Մսակեր: 20. Նեվրոզ: 22. Մարզպետ: 23. Գլամուր: 24. Վիլսոն: 28. Կիլիկիա: 29. Կրասոս: 30. Համլետ: 34. Կատրամիդե: 36. Մենուա: 38. Անամպ: 39. Ալեքսանդր: 40. Վռամշապուհ:

Ont collaboré avec ce numéro:
Jaqueline Kasparian, Bernard Dupont, Aude Merlin, Anna Hakobyan, Margarit Khachatryan, Nune Alexanyan, Haïk Ghambarian, Narine Bazinian

Այս համարի նյութերի նախապատրաստմանն օժանդակել են՝
Ժաքլին Կասպարյանը, Բերնար Դյուպոնը, Օդ Մերլենը, Աննա Հակոբյանը, Մարգարիտ Խաչատրյանը, Նունե Ալեքսանյանը, Հայկ Ղամբարյանը, Նարինե Բազինյանը

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.83.03.88.30, 09.51.36.49.21

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.83.03.88.30, 09.51.36.49.21

Responsable de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Գ. Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

ISSN 2117-5772

ISSN 2117-5772